

## ԳՐԱԿՐՈՒԹԻՒՄՆԵՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎՐԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

**ՀՆԴԵԿՐՈՊՊԱԿԱՆ ԼԵԶՈՒԱԽՈՒՄԲ.**

Երկրագնդի վրայ բոլոր գոյութիւն ունեցող կամ մեռած լեզուները արդի լեզուաբանութիւնը բաժանում է խմբակցութիւնների: Դրա համար կան մի քանի տեսակէտներ, որոնցից ամենակարերն է լեզուների ազգակցական կապը, որի հիման վրայ ստացում է լեզուների տոհմաբանական (գենետիբական) կլասսիֆիկացիան: Այս կլասսիֆիկացիայի կամ զառակարգութեան մէջ մտնում են լեզուական ընտանիքները, այսինքն լեզուական խոշոր խմբակցութիւններ, որոնք իրենց մէջ պարունակում են այն բոլոր լեզուները, որոնք իրար հետ կապուած են ազգակցական կապերով. սրանցից ոմանք ունենալով իրայ հետ աւելի սերտ ազգակցական կապեր, կազմում են ընտանիքի մէջ աւելի փոքր խմբակցութիւններ և ձևացնում են ընտանիքի միւզեզը: Լեզուական ընտանիքների մէջ առանձնապես կարելոր տեղ է բռնում հնդեւրապական ընտանիքը կամ լեզուախումբը ոչ միայն այն պատճառով, որ այդ ընտանիքին են պատկանում մեր և մեզ ծանօթ եւրոպական և ասիական պիտառը լեզուները, այլ զիսաւորապէս այն պատճառով, որ այդ հողի վրայ ծնունդ տռաւ լեզուի զիտական ուսումնասիրութիւնը և այդ ընտանիքն ամենամշակուածն է արդի լեզուաբանութեան մէջ և այդ մասում կարելի է անցնել մասնազիտական շկոլա և ձեռք բերել լեզուաբանական պատրաստութիւն:

Հնդեւրոպական ընտանիք կոչում է լեզուաբանութեան հիմնադիր Յոպակից սկսած այն լեզուախումբը, որի զանազան ծիւզերը տարածւում են Ասիայի մի նշանաւոր մասում Հնդկաստանից միսած և բռնում են համարեա ամբողջ եւրոպան: Այդ միւզեզը հետեւալներն են. Հնդկական, իրանական, Հայկական, Ալբանական, Յունական, Իտալա-

կան (Թումանական) Կելտական, Գերմանական, Բալթիական (Լիթովական) և Ալմանական<sup>\*</sup>):

Այդ բոլոր լեզուները ծագել են մի ընդհանուր լեզուից որ վաղուց արդէն զագարել է գոյութիւն ունենալուց և որի ոչ մի զրաւով յիշատակարանը մեզ չէ հասել: Մի ժամանակ սխալմամբ ենթագրուում էր (Նլեզել և այլն), որ այդ լեզուն պէտք է լինէր սանսկրիտը, այսինքն Հին հընդիերէնը, սակայն համեմատական լեզուարաւութիւնը ցոյց տուեց, որ սանսկրիտն էլ հնդկերոպական այնպիսի մի լեզուէ, ինչպէս օր՝ յունարէնը, լատիներէնը և այլն, միայն նրա գուաւոր յիշատակարանները և լեզուի քերականակ ն կազմը համեմատարար աւելի հին են: Այդ անյայտացած մայր լեզուն կոչում է հնդկերոպական նախալեզու նրա մասին մենք ունինք այժմ՝ լիակատար տեզեկութիւններ շնորհիւ հնդկերոպական համեմատական լեզուարանութիւնն: յայտնի է նրա քերականական, այսինքն ֆոնետիքական, մորֆոլոգիական և շարահիւ սական կազմը բազմաթիւ մանրամասնութիւններով, կազմուած է նրա բառարանը, նոյն իսկ մօտաւորապէս որոշուած է այն տարածութիւնը, որտեղ ապրելիս է եղել նախալեզուն գործածող ժողովուրդը: Հնդկերոպացիների նախահայրենիքը սկզբում համարւում էր Հնդկաստանը, բայց վերջերս կատարած աւելի հիմնարոր և մանրակրկիտ ուսումնասիրութիւնները տրամադրում են ընդունել, որ նա տարածում էր մօտաւորապէս Կարպատներից սկսած մինչև Բալթիկ ծով ընդգրկելով Լեհաստանը և Պրուսիան:

Դեռ նախահայրենիքում հնդկերոպական լեզուում առաջացել էին բարբառներ, որոնցից իւրաքանչիւրն ընդունելով նորանոր տարբեր հարեւան բարբառներից և օտար

\*.) Պէտք է նկատել, որ գերմանական լինդուիստները «Հնդկերոպական»ի փոխարէն գործ են ածում հնդկագերմանական (Indogerманisch) տերմինը, ի նկատի ունենալով, որ հնդկերոպական լեզուների սահմանը արեելքում Հնդկաստանն է, իսկ արևմուտքում՝ Գերմանական երկրները: Միւս ազգերի մէջ լիզուարանների մօտ ընդունուած տերմինը «Հնդկերոպականն» է:

լեզուներից, սկսեցին ապրել առանձին կեանքով և կամաց կամաց կազմակերպուելով ոչ միայն փոխուեցին ինքնուրոյն լեզուներին այլև իրենց հերթին կազմեցին լեզուական ընտանիքներ, ներկայացնելով միաժամանակ հնդկրոպական ընտանիքի ճիւղերը: Այդ ճիւղերի մայր լեզուից բաժանուելը չէր կարող տեղի ունենալ միաժամանակ, կամ թէկուզ կարծ ժամանակամիջոցում. այդպիսի գիֆֆերենցիացիան կախուած է բազմաթիւ հանգամանքներից, որոնց մէջ մտնում են զանազան գաղթեր, հարեւան օտար ազգերի ազգեցութիւն, կլիմայական, քաղաքական պայմաններ ևյն: Այդպիսով նախալեզուի անկման և ճիւղերի զարգանալու շրջանն ընդգրկում է երկար տարիներ, որոնք տարրեր են եղել ճիւղերից իւրաքանչյւրի համար և ուրեմն նախալեզուի վիճակը, որ պարզել է մեզ համեմատական լեզուարանութիւնը՝ իրական չէ կարող լինել: Մեզ այժմ յայտնի զանազան լեզուական ֆակտերը կարող են վերաբերուել նախալեզուի այս կամ այն շրջանին միայն և չէին կարող տեղի ունենալ միաժամանակ և լեզուի բոլոր մասերում:

1. Հնդկական նիւդ.—Այս ճիւղի հնագոյն ներկայացուցիչն է հին հնդկերէնը իւր երկու բարբառներով—վեդական և սահսկրիտ: Հին հնդկերէնը մեզ յայտնի ամենահին հնդկրոպական լեզուն է:

1. Վեդաների լեզուն այն լեզուն է, որով զրուած են հնդկական սրբազն վեդաների (vēda-s նշանակում է գիտութիւն, արմատը՝ նոյնն է, ինչ որ հայերէն «գիտութիւն», «գէտ», ոռւսերէն Ենդատ, գերմաներէն wissen և այն). 4 ժողովածուները և հնդկական հնագոյն աստուածաբանական գրականութիւնը: Վեդաների ժողովածուներից առաջինը և հնագոյնը կոչւում է R̄gveda-s (օրհներգութեանց վեդա). առ բաժանուած է 10 գլուխ և ամփոփում է աւելի քան 1000 օրհներգութիւն (հիմն) մօտ 10,000 տողից բաղկացած, որոնցից մի քանիսը կազմուած են աւելի քան 1500 տարի ն. ք. Քրիստոս: Երկրորդ ժողովածուն կոչւում է Sāmavedas (զովաբանական վեդա), այստեղ ևս զետեղուած են հիմներ, մեծ մասամբ R̄gveda-ից, միայն

ծիսակատարութեան համար կարեսը այլ գասաւորութեամբ։ Երրորդ ժողովածուն է Խայր Վեդա-s (Եաջուր վեզա, զոհաբերական վեզաներ), իսկ չորրորդը Աթարվածա-s, որտեղ հաւաքուած են կախարդական ասացուածներ։

Վեզաների լեզուն չը նայած բնագրի կրկնակի խմբագրութեան, մնացել է անազարտ և սրանով վեզաների նշանակութիւնն աւելի է մեծանում լեզուաբանութեան համար։

Վեզայական լեզուով են գրուած, բայց աւելի յիշեցնում են սանսկրիտ լեզուն հին հնդկական աստուածաբանական և փիլիսոփայական մի շարք արձակ գրուածքներ—  
1) Բրահմաններ, որոնք կազմում են և վեզաների մեկնութիւնները; 2) Սուտրա, որ ամփոփում է կրօնական, հասարակական և ընտանեկան կեանքին վերաբերեալ կանոններ; 3) Ուպանիշադ—փիլիսոփայական բովանդակութեամբ և այլն։

2. Սանսկրիտ.—samskr̄ta նշանակում է «բոլորովին մաքուր», մշակուած, այսինքն մաքուր գրական լեզու, որ սկզբում եղել է արիստոկրատ շրջանների խօսակցական լեզուն (համեմ՝ հայերէն «գրաբարը»)—սրան հակագրում է պրակրիտը—prakṝta—բնական, ժողովրդական լեզու): Սանսկրիտի քերականական պատիերը ներկայացրել է մեզ հռչակաւոր քերական Պանինին 4-րդ դարում նախ քան Քրիստոս։

Եւրոպայում երբեմն սանսկրիտ անուանում են նաև վեզերէնը։ սակայն ինչպէս տեսանք, սանսկրիտն այլ բարսու է և յայտնի է դառնում աւելի ուշ ժամանակում։ Քան վեզաների լեզուն։ Սանսկրիտն ունի հսկայական գրականութիւն, որը, ինչպէս և սանսկրիտ լեզուն, կոչւում է դասական-կլասսիք։

Այնքին յայտնի է հնդկական հռչակաւոր վեպը—Ռամայանա և Մահաբհարատա (Նալ, Սավիտրի և այլն); Սանսկրիտի գրականութեան նշանաւոր երկերից է նաև Պանչատանտրան (հնդամատեան-ժողովածու առակների), որ հսկայական նշանակութիւն սւնի (որպէս աղբիւր) ասիական և եւրոպական գրականութեան համար։ Առակների դիբք է (աւելի համառօտ) նաև Հիսուսնիշան։—Յայտնի է

սանսկրիտ լեզուով գրուած հնդկական նշանաւոր օրինագիրը—Մանու (6 դար նախ ք. Քրիստոս):—Վ կամ VI-րդ դարում Քրիստոսից յետոյ ապրել է հնդկական մեծ գրամատուրզը—Կալփղասա, որի Շակունտալա գրաման հիացմունք է պատճառել Գեօթէին: Յայտնի են նոյնպէս նրա Աւրվասի և այլ գրամաները: —

Սանսկրիտ լեզուով պահուած է նաև ընդարձակ և արշեհրաւոր փիլիսոփայական գրականութիւն:

Սանսկրիտը դեռ մի դար Քրիստոսից առաջ դադարել է խօսակցական լեզու լինելուց և դործ է ածուել միայն գրականութեան մէջ: Այժմ նա մեռած լեզու է, ինչպէս յունարէնը, լատիներէնը, կամ մեր գրաբարը, բայց շարունակում է գործածուել գիտնականների կողմից որպէս գիտական լեզու (Համեմ: Լատիներէնի գործածութիւնը մինչև 19-րդ դար):

Հին հնդկերէնը (ինչպէս վեգերէնը, այնպէս և սանսկրիտը) հնդկերոպական լեզուաբանութեան համար ունի առաջնակարգ նշանակութիւն: Նախալեզուի քերականական կազմը նրա մէջ պահուած է ընդհանուր առմամբ աւելի հարազատօրէն, քան հնդկերոպական միւս լեզուներում: Սակայն այդ նշանակութիւնը չը պէտք է չափազանցեցնել, քերականական շատ ձեւեր աւելի ճիշտ պահուած են յունարէնաւմ: Լատիներէնում լիթուերէնում և այլն, քան սանսկրիտում: Սանսկրիտական գիրը, որ կոչւում է գեանագարի (dēva=աստուած, բրահման և այլն), nagara=քաղաք. (բառի նշանակութիւնը և ծագումն անյայտ է.) Հիմնուած է սիլլաբական (վանկային) սկզբունքի վրայ. նա շատ հին ծագումն ունի և հնչիւնաբանական տեսակէտից միանգամայն համապատասխանում է արգի լեզուաբանական պահանջներին:

Յ Պըակըրիտն, ինչպէս աեսանք, հնդկական ժողովրդական լեզուն է և քերականների կողմից հակագրւում է սանսկրիտին: Վեգաների լեզուի և սանսկրիտի համեմատութեամբ նա աւելի նոր լեզու է, այսինքն ներկայացնույլ է խօսակցական լեզուի զարդացման աւելի նոր էթապ-

ուստի կոչում է միջին հնդկերէն։ Պրակրիտը ևս սկսեց զբականութեան մէջ գործածուել։ դեռ սանսկրիտական զբամայում ստորին դասակարգին պատկանող անձինք խօսում են պրակրիտի բարբառներով։ Որպէս զբական լեզու յայտնի է աւելի պրակրիտի մի ճիւղը—սլալի, որ ունի ընդարձակ բուդդիստական զբականութիւն։

4. Նոր հնդկական լեզուները առաջացել են միջին հնդկերէնից շնորհիւ զանազան փոփոխութիւններից որոնք հնդիկ քերականների մօտ համարեռմ են լեզուի «անկումն»։ Յայտնի են 9 նոր հնդկական լեզուներ, որոնց մէջ մտնում են Բենզալի, Փանջարի, Սինդի, Հինդի, Մահրատի և այլն։ Այդ նոր հնդկական լեզուներից է նաև ցիզաներէնը կամ գնչուների լեզուն։ Գնչուները գուրս գալով հնդկաստանից, տարածուել են արեւմուտք և հասել մինչև Եւրոպա։ Նրանց լեզուն պարունակում է բազմաթիւ փոխառած բառեր այն ժողովրդների լեզուներից, որոնց հետ շփուել են գնչուները իրենց երկարատև աստանդական կեանքի ընթացքում։

ՈՒՐԱՆԻԱԼԱՆ նիւդ. — Յայտնի են հին իրանական երկու բարբառներ։ — Հին պարսկերէնը և Աւեստայի լեզուն։ Հին իրանական լեզու է նաև Սկիւթերէնը, որի մասին սակայն շատ քիչ տեղեկութիւններ են հասել մեզ։

1. Հին պարոկերէնը յայտնի է մեզ Աքեմենիդեան հարստութեան ներկայացուցիչների, զլիաւորապէս Դարեհ Վշտասպեանի թողած բեկուածեւ արձանագրութիւններից, որոնք վերաբերում են 520—350 թւերին նախ ք. Քրիստոս։ Դրանցից հնագոյնը և ամենամեծն է Դարեհի մի ժայռի վրայ փորագրած այսպէս կոչուած Բեհիստանի արձանագրութիւնը, որի մէջ նկարագրած են Դարեհի սխրագործութիւնները։

Հին պարսկական բեկուագործիւնը հին ասորաբարեւլականի ձեւափոխութիւնն է և ներկայացնում է սիլլաբական գրութիւն։ Բեկուագիրները երեքլեզուեան են։ Հին պարսկերէնի հետ այդտեղ գտնւում են մեզական կամ մարական (նօշի) և ասորաբարելական լեզուով արձանագրութիւններ։ Արձանագրութիւնները կարդացուեցին 19-րդ

զարում — առաջ Հին պարսկերէնը սահսկրիտի օգնութեամբ, իսկ յետոյ և միւսները: Այդպիսով գտնուեց ասորաբարելական արձանադրութիւնների ընթերցման բանալին:

2. Աւեստայի լեզուն, որ թիւրիմացութեամբ կոչւում է զենդերէն կամ զենդ: Այդ լեզուով զրուած է Աւեստան, որ Զարատուշտրայի (Զորոաստրի) կրօնի հետեղների, այսպէս կոչուած պարսերի, սրբազն զրականութեան ժողովածուն է: Ժողովածուի հնագոյն մասը կազմում են զատաները — օրհներգութիւններ — թւով 17, որոնք կազմուած են մօտ 1000 տարի Քրիստոսից առաջ, իսկ միւս մասերն ընդհանրապէս աւելի նոր են:

Սասանեանների օրով Աւեստան, որ արդէն անհասկանալի էր զարձել, փոխուեց պեհլերէնի (պահլաւերէնի), որ միջին շրջանի իրանական (պարթևների) լեզուն է: Թարգմանութիւնը, որին կցուած են և մեկնութիւններ, կոչւում է Զենդ\*):

Աւեստայի լեզուն կոչւում է նաև Հին Բակտրիական այն հիման վրայ, որ այդ լեզուով խօսող ժողովուրդը ապրել է մօտաւորապէս Բակտրիայի սահմաններում:

Աւեստան այն ձևով, ինչպէս մեզ է հասել, որոշ չափով մշակուած և խմբագրուած ժողովածու է, որի վրայ աշխատել են Սասանեան շրջանի գիտնականները:

2. Միջին իրանական լեզու է պարթևների լեզուն — պեհլելին (պահլաւերէնը), որ կոչւում է նոյնպէս միջին պարսկերէն: Արա զլաւոր զրական յիշտատակարանն է Զենդը, որ ինչպէս ասացինք, Աւեստայի թարգմանութիւնն է մեկնութիւններով: Պեհլեին գործածական էր պարթև Արշակունիների և Սասանեան շրջաններում: Նա պարունակում է բաղմաթիւ փոխառած սեմական բառեր և ձևեր:

\* ) «Աւեստա» բառի մեզ յայտնի ձևն է միջին պարսկական ավատակում է հիմք. ուրիմ Աւեստա գործ է ածուել «հիմնական զիրք», «բնագիր» իմաստով, avesta—va—send (կամ sand) նշանակել է բնագիր և կոմմնատար: Այստեղից եւրոպական գրականութեան մէջ թիւրիմացութեամբ Զենդ անունը վերագրուել է Աւեստայի լեզուին, իսկ Զենդ-Աւեստա կոչուել է ինքը ժողովածուն:

3. Նոր շրջանի իրանական լեզուն է նոր պարսկերէնը բազմաթիւ բարբառներով.—Նոր պարսկերէն գրական լեզուն ունի հարուստ գրականութիւն, որ սկսում է 9-րդ դարուց Քրիստոսից յետոյ: Այս լեզուով են գրուած Թիրողուսու Հռչակաւոր Շահ-Նազէն (Թագաւորների գիրք).—Մօտ 1000 տարի Քրիստոսից յետոյ), Հաֆրզի քնարներական բանաստեղծութիւնները, Սաազու Գիւլիստանը (վարդարան) և այլն: Նոր պարսկերէնը գրութեան համար օգտում է արաբական տառերից, որոնց աւելանում են մի քանի պայմանական նշաններ:

Նոր պարսկերէնի բարբառները կարելի է բաժանել երկու խմբի—Արևմտեան և Արևելեան:

Արևմտեան բարբառների թւին պատկանում են.

1. Քրդերէնը. Այս լեզուն գործածական է ոչ միայն Քուրդիստանում, այլ մասամբ և Աֆղանիստանում և Բաշլութիստանում: Քրդերէն գործածող ազգաբնակութեան թիւն է մօտ 2 միլիոն: Քրդերէնը ծագել է հին պարսկերէնին մօտ մի արևմտեան բարբառից և ներկայումս բաժանում է երկու բարբառների—Զազա և քուրմանջի:

2. Կասպիական բարբառախումը, որի մէջ մտնում են Գիլանի, Մազանդարանի, Թալիշի և Թաթերի բարբառները:

3. Կենտրոնական բարբառներ, որոնք են Գերեհերի բարբառը, որ բաւական հին հնչիւնական կազմ ունի: Սա պարսկերի լեզուն է, որով խօսում են Զորոաստրի ուսմունքի հետեւողները—պարսկերը, թւով մօտ 9000, որոնք Գերը անուանում են մահմեդական պարսիկներից: Կաշանի բարբառ (Թէհրանի և Խապահանի միջև) և այլն:

Արևելեան բարբառները հետեւալներն են.—

1. Աֆղանսկանը, որի տեղական անունն է Պաշտուկամ Պուշտու: Աֆղաներէնը բաւական հեռացել է իրանական տիպից. 16-րդ դարից սկսած նա գրական գործածութեան մէջ ևս մտել է: Շատ աւելի հին իրանական տիպ ունի:

2. Բալուջների բարբառը, որ գործածական է Բալուջիստանում և զուրկ է գրականութիւնից:

3. ՊԱՐՄԻՋԻ մի քանի բարբառներ և

4. Օսերէնը կամ օսերի լեզուն, որ չը նայած իւր աշխարհագրական դիրքին, նոյնպէս պատկանում է արևելեան իրանական բարբառախմբին։ Օսերը թւով մօտ 130 հազար են և բնակում են Կովկասի լեռների միջին մասերում։ Նրանք ծագում են հին սկիւթացիներից կամ ալաններից։ արաբացի աշխարհագետների մօտ նրանք աս անունով են յայտնի, ոս կոչւում են վրացիներից և այլ հարեան ազգերից, իսկ իրենք անուանում են իրանց իրօն։

Օսերէնն ունի երեք բարբառ. Դիգորեան (արևելեան), Տագաուրեան (արևելեան) և Տուալեան (հարաւային)։

Հնդկական և իրանական ճիւղերը կարելի է միացնել և ընդունել մէկ ընդհանուր հնդկա-իրանական ճիւղ այն հիմնն վրայ, որ նրանք սկզբնական շրջանում ապրել են մի ընդհանուր կեանքով և բազմաթիւ լեզուական երեսյթներ շատ մօտ են իրար հին հնդկերէնում և հին իրանական լեզուներում։ Հնդկաիրանական լեզուները կոչւում են նաև արիական, պէտք է նկատել սակայն, որ «արիական» տերմինը զործ է ածւում նաև հնդկերոպականի իմաստով և կարող է շփոթութիւնների առիթ լինել։

III Հայկական նիւդ. — Հայերէնը զուտ հնդկերոպական լեզու չէ, գոնէ այն չափով, ինչ չափով միւս հնդկերոպական լեզուները, որ սանսկրիտ, զենդ, յունարէն, լատիներէն, լիթուերէն և այլն։ Հնդկերոպական զլիսաւոր տարրի հետ հայերէնում խառն է մի կամ մի քանի այլ հին ոչ հնդկերոպական, տարրեր, որի պատճառով լեզուի նախնական պատկերը բոլորովին կերպարանափոխուել է։

Հայերէնի հնդկերոպական լեզու լինելը առաջին անգամ հաստատել են Պետերման (Grammatica linguae armeniacae 1837) և Վինդիշման (Die Grudlagen des Armenischen im arischen Srsachstamme 1846)։ Մինչև 1875 թ. տիրում էր այն կարծիքը, որ հայերէնը պատկանում է իրանական ճիւղին, բայց Շտրասբուրգի համալսարանի պոտֆեսոր Հիւրշման այդ թւին տպած մի յօդուածում (Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen

Sprachen, K. Z. 13, 5—42) և մանաւանդ 1883թ. հրատարակած Armenianische Studien զբքում վերջնականապէս հաստատեց, որ Հայերէնը հնդկրոպական ընտանիքի մի անկախ և ինքնուրոյն ճիւղ է, ինչպէս և հնդկական, իրանական և այլ ճիւղեր։ Սակայն ինչպէս ասացինք, Հայերէնի էջ բացի հնդկրոպական զինաւոր շերտից կայ և այլ լեզուական հին շերտ, որի որոշելը չափազանց մեծ դժուարութիւններ է առաջ բերում։ Հարցը պարզ ըմբռնելու համար կարևոր է ծանօթանալ հետևեալ մանրամասնութիւններին։

Եւրոպացի գիտնականների մի շարք նորագոյն ուսումնասիրութիւնների համեմատ (Tomaschek, Die alten Thraker 1893, I, 4 և այլն, Kretschmer, Einleitung in die Geschichte der Griechischen Sprachen 1896, p. 208 ff. Ed. Meyer, Geschichte des Altersbums, 1893 II p. 41, նաև Բելքի և Ամանի խալդական ուսումնասիր.) (Verhandlungen der Berliner Anthropol. Geellsch., 1895) և այլն, Հայերըցեղակից են փոխացիներին և գաղթել են Հայաստան Թեսալիայից Փոքր Ասիայի միջով։ Իսկ Հայաստանում հին ժամանակ ապրում էր բոլորովին այլ ժողովուրդ, բազկացած մէկ կամ մի քանի ազգերից, բայց յատկապէս որ ազգերից, այդ մասին մենք ճշգրիտ տեղեկութիւններ չունինք։ Սակայն մեզ մօտաւորապէս յայտնի են այն ազգերը, որոնք բնակում էին Հայաստանի սահմաններում կամ հարեան և ցեղակից էին Հայաստանի նախկին բնիկներին։ Այդ ազգերից զինաւորները հետևեալներն են.

1) Ուրարտու (ըստ ասորեստանի արձանագրութիւնների), որոնց Հերոդոտն անուանում է՝ 'Ալարօնօս' (ալարողներ) և որոնք այլ կերպ կոչւում էին խալդեր (զինաւոր աստուծոյ անունով) և ապրում էին Վանի լճի և Արաքսի մէջտեղում։ Հըէաներն այդ ժողովրդի անունով երկիրն էլ Արարատ էին կոչում։

Ուրարտուն սկսած 9-րդ դարի կիսից մինչև 7-րդի վերջը մշում էր Ասորեստանի հզօր թագաւորների դէմ փոփոխակի յաջողութեամբ յամառ կռիւ, որի սկիզբը դրել

էր Աւրարտուի հարեան Նախրի տէրութիւնը (Աւրարտուի մեղ յայտնի առաջին պատերազմող թագաւորն էր Արամեա վերջինը Արգիշտի Ա<sup>2</sup>):

Այնուհետև երկու կռւող պետութիւններն ստիպուած էին միանալ և կռիւ մզել նոր աշեղ թշնամիների դէմք դրանք էին Կիմմերիացիք (Գամիլք) և Սակերը:

Սակերը Ամուգարիայի ափերից ներս խուժելով (մօտ 9-րդ դարի կիսին) Կիմմերիացոց երկիրը (Հարաւային Ուռուսաստան), դուրս քշեցին բնակիչներին, որոնց մի մասը թրակիա մտնելով և իր հետ առնելով թրակիական ցեղի ժողովրդներ—փոխդիացոց, տրերներին և այլն (որոնց թւում թերեւ և հայերին <sup>\*\*</sup>) անցաւ Հելլեսպոնտոսով փոքր Ասիա, իսկ միւս մասը Կովկաս սարերն անցնելով դիմեց գեպի Քուռի Հովիտը: Սրանց հետապնդեցին սակերը և նոյնպէս մտան Քուռի Հովիտը: Այս երկու ցեղերի արշաւանքով Առաջաւոր Ասիայի ազգերի պատմութիւնը նոր ընթացք է ընդունում:

Արեւելեան Կիմմերիացիք Աւրարտուի և Ասորեստանի հետ ունեցած կռւից յետոյ (720 թ.) միանում են իրենց արեւմտեան արենակիցների և Տրերների հետ և այնուհետև Աւրարտուի և Ասորեստանի հետ ևս մի շարք կռիւներ մզելուց յետոյ վերջնականապէս ջարդ են կրում Լիւդիայի Աղլիաթ ԱՅ թագաւորից:

Իսկ Սակերը միացնելով իրենց հետ Կիմմերիացոց մի մասը

<sup>\*</sup>) Աւրարտուի մասին բացի Ասորեստանի արձանագրութիւններից պատմում են նաև այսպէս կոչուած Վանի արձանագրութիւնները, որոնք թւով աւելի քան 100, գտնվում են Հայաստանի զանազան վայրերում, զլիսաւորն է Վանինը 500 տողից բաղկացած, որ փորագրած է Վանի ժայռի վրայ: Արձանագրութիւնները կարգացել են Բ, Պատկանեան, Սէյս, Նիկոլակի, Խվանովիկի, Բելք, Լեման:

<sup>\*\*</sup>) Հայերի փոխդացոց հետ ունեցած ազգակցութիւնը հաստատում է բացի պատմական ակնարկներից (Հերոդոտ հայերին անուանում է Փրոյան առօχու—Հերոդ. VII, 73) և լեզուական հետքերի վրայ հիմնուած ապացոյցներից նաև մարդարանական ուսումնասիրութեամբ: Վիրխով Փոխդիայի սահմաններից վերցրած գանգեր նոյնացրել է հայկականների հետ:

և այլ զանազան ցեղեր, աւերում են Ասորեստանը, ոչնչաց-  
նում Աւրարտուն և Հարեան երկրները։ Արանք էլ սակայն  
վերջի վերջոյ ջարգում են Մեղիայի (Մարաց) թագաւոր  
Դիաքսարից Դարդ գարի սկզբում և ցրում են, հասնելով  
մինչև փոքր Ասիա և մասամբ վերադառնում են Եւրոպա։  
Ահա այդ ժամանակ երեան են զալիս Հնդկերոպացի  
Հայերը (Հերովոտի Արքանու (արմեններ) և Դարեհ Վըշ-  
տասպեանի արձանագրութիւնների Արմինիա), որոնք հա-  
ւանականաբար խառնուրդ են թրակիացոց և կիմմերիացոց  
և որոնց բնակութեան տեղը տարածւում է Ազի գետից  
(Halys) և Կիլիկիայից մինչև Եփրատ և Տիգրիս գետերի  
ակունքները, ապա նաև Այրարատեան զաշտը (Փոքր և  
Մեծ Հայք)։

2. Հաթթեր կամ Հեթեթներ, որանք զօրեղ ազգ էին  
և բնակում էին մօտաւորապէս Կապացովիկիայի սահման-  
ներում 15—Դարդ դարերում նախ քան Քրիստոս։ Կար-  
ծում են որ Հաթթերը գրաւել էին Քրիստոսից մօտ 2000  
տարի առաջ նաև Կիլիկիան, Միջագետքը և Հայաստանը,  
նրանց ծագումը յայտնի չէ, բայց նրանք յամենայն դէպս  
Սեմիտներ կամ Քամիտներ չեն։

Հաթթական պետութիւն էր Միսուննին (Միջագետ-  
քում; յայտի 15-րդ դարից նախ քան Քրիստոս), որ  
կոչում էր Եգիպտացիներից նաև նադարինի (Աւրարտուի  
Հարեան նաիրի?՝), և որ յայտն է Եգիպտոսի դէմ մղած  
մի շարք արիւնահեղ պատերազմներով, իսկ ապա՝ բարե-  
կամական յարաբերութեամբ (Երկուստեք ուղարկած նա-  
մակներ և ընծաներ)։ Հաթթական ծագումն ունէին Հա-  
ւանօրէն նաև վերոյիշեալ նաիրին, Աւրարտուն, նոյնիսկ  
թերես Լիւզիացիք և Լիկիացիք։

Հաթթերի արձանագրութիւններով զբազուել են մի-  
քանի գիտնականներ (Սէյս, Հիրշֆելդ, Պուխշտայն ևայլն),  
ի միջի այլոց և Մարբուրգի պոոֆ. ասորագէտ ենսեն, որ  
նոր Հայերէնի օգնութեամբ կարգացել է 40-ի չափ արձա-  
նագրութիւններ և եկել այն Եգրակացութեան, որ Հե-  
թիթները Հայերի նախնիքն են։

3. Էլամի թկակիշները.—Սրանց մասին բացի օտար աղքիւրներից պատմում են և Շօշի (Էլամի մայրաքաղաքի) արձանագրութիւնները, որոնց հնագոյնը հասնում է մինչև 2-րդ հազարամետակի կեսը՝ նախ քան Քրիստոս (կարգացել են Վայսբախ, Աէյտ Ենսեն և այլն); Էլամի բնակիշներին Մորգան համարում է ազգակից Նեղութոսներին։ Լեզուն մօտ է Կովկասեան լեզուներին։ Պատմութեան մէջ Էլամցիք յայտնի են 2280 թւից, երբ նրանք սկսում են երկարատև արիւնաշեղ պատերապմներ Ասորա-Բարելոնեան պետութեան դէմ։ Սրանցից վերջնական հարուած ստանալով 6-րդ դարում ձուլում են մարերի և պարսկիների հետ։

4. Հնդկրոպացի Մեղացիք (Մարերը) եւ Պարսիկները։ Սրանց վրայ մենք կանդ չենք առնիլ, որովհետեւ ինչպէս նրանց լեզուի ցեղակցութիւնը եկուոր հայերի լեզուի հետ, այնպէս և նրանց պատմութիւնը և յետազայի պատմական յարաբերութիւնները հայերի հետ հանրածանօթ են։ Նկատ տենք միայն, որ հազիւ պատմական ասպարէղ ելած հայերը առաջին իսկ քայլերից գործ են ունենում այդ ազգերի հետ, և որ Մեդացիների հետ ունեցած թշնամական յարաբերութիւնը վերջը փոխուում է բարեկամականի դէպի պարսիկները (համեմ Թսենոքոնի յիշած Տիգրանի օդնական դունդը կիւրոսին ընդդէմ Բարելոնի 538 թ.)։

5. Կովկասեան ցեղեղ, զլիաւորապէս Քարթուելեան ցեղին պատկանող կամ աւելի ճիշտ—յազեթական լեզուներ գործածող ժողովրդներ, որոնց արդի սերունատներն են Վրացիք, Սվանները, Մինզրելները և Լազերը։

Հնդկրոպացի եկուոր հայերի դէպի բնիկներն ունեցած յարաբերութիւնը պարզելու համար կարենոր է հարեանցի կերպով ծանօթանալ պոռֆ. Մառի Յարեթական թէորիայի հետ, որի համար նախ պէտք է դադափար կազմել յարեթական լեզուների մասին։

Յարեթական ընտանիք (աւելի ճիշտ—Յարեթական ճիւղ նոյական ընտանիքի), որի միւս ճիւղերն են Սեմականը և Քամականը), այսպէս է անուանում պոռֆ. Մառը այն լեզուախումբը, որ սովորաբար կոչւում է Քարթուել-

ևան կամ՝ Հարաւային Կովկասեան և որ ոչ մի առընչութիւն չունի հնդկոպական ընտանիքի հետ:

Ներկայումս այդ ընտանիքին պատկանում են հետեւեալ լեզուները.—1. Սվանելիէնը, որ ըստ Մառի ամենից աւելի մաս է երեսում նախարիական հայերի, այսինքն Հայաստանի բնիկների լեզուին։ Սվաներն ապրում են Սվանեթիայում որ բռնում է Խնդուրի վերին հոսանքը և Ռիոնի վտակ Յիսենիս Մզալիի հովիտը։

2. Լազերէնը կամ ճաներէնը. պռով. Մառի կարծիքով այս լեզուն ունի առընչութիւն Սուզայի (Շօշի), ինչպէս նաև Վանի բևեռագիր արձանագրութիւնների հետ։ Լազերը յոյտնի են հին ժամանակներից—65 թ., նախ ք., Քրիստոս 1204 թ., Ալ. Կոմինոս կայսրը հիմնեց Տրապիզոնի թագավորութիւնը, որ սավորաբար կոչւում է Կողքիսի կամ Լազերի թագավորութիւն։ Այժմ լազերն ապրում են Լազարանում։ որ ընկնում է Տրապիզոնի վիլայէթում և Բաքումի շրջանում—Ճորխիսի ստորին հոսանքում։

3. Մ'ն լրելերէնը։ Սա միւս յարեթական լեզուներից աւելի մօտ է ճաներէնին։ Մինդրելները թւով աւելի բազմաթիւ են, ապրում են Քութայիսի նահանգում։ 4 դար շարունակ, սկսած 1442 թւից, նրանք ունեին իրենց անկախ տէրութիւնը։

4. Վրացերէնը. սա միակ յարեթական դրական լեզուն է, որի հետագոյն յիշատակարանները հասնում են մինչեւ 5-րդ դար Քրիստոսից յետոյ։—Վրացիք իրենց անուանում են Քարթւելի կամ Քարթուլի, իսկ իրենց երկիրը —Մաքարթուելօ։ Հները անուանում են նրանց իրերներ, որի Հայկական ձեւն է երեկի «Վիրք»։ Վրացիք բառը հաւաքական անուն է մի քանի ցեղերի համար, որոնք են ա) իսկական վրացիներ (կէս միլիոնից աւելի, Թիֆլիզի նահանգ) բ) լիռնական վրացիներ (թուշեր, պշաւներ, խեռուրներ), որոնք ապրում են Կովկասեան լեռներում գ) Խոզիլօյներ (Զաքաթալի շրջան) դ) Խմելեթներ (Քութայիսի և Թիֆլ նահանգ, աւելի քան 500 հազար) ե) Գուրիացիք (Քութայիսի նահանգ, Օգուրզեթի շրջան) և նրանց մահմեդական ազ-

գակիցները—դ) Աջարները (Բաթումի և Արդուինի շրջան):

Բառ պռով, Մառի նորագոյն հետազօտութեանց \*) այդ բոլոր կենդանի և մի քանի անյայտացած յարեթական լեզուներ կազմում են հետեւեալ խմբերը.—1) Տուբալվայնականներէնը և Մինդրելերէնը) 2) Սոն լեզուներ (Սվաներէնը և Հայաստանի բնիկների—նախարիական) լեզուն, 3) Կաշղ-Մոսկվական (Վրացերէնը և նրա հետ ձուլուած Մեսիերէնը): 4-րդ խմբում կարելի է զետեղել հին Վրաստանի և Հայաստանի սահմաններից գուրս գտնուած լեզուները, որոնց ազգակցութիւնը յարեթական լեզուների հետ Մառը համարում է ակներե: Սրանք են Վանի և Շօշի արձանագրութիւնների լեզուները:

Ինչպէս յիշեցինք, պռ, Մառը յարեթական լեզուները համարում է ոչ առանձին ընտանիք, այլ ճիւղ, սակայն ոչ թէ Կովկասեան ընտանիքի, ինչպէս այլ լինդուիստներ (նուրբերից—Թինկ), այլ ընդհանուր Նոյական ընտանիքի, որի միւս ճիւղերն են Աեմականը և Քամականը: Այդպիսով Մառը իւր հուաքած հարուստ նիւթի և կազմած յարեթական ֆոնետեկայի վրայ հիմնուած հաստատում է, որ յարեթական լեզուներն ազգակից են սեմական և քամական լեզուների, որ այդ ազգակցութիւնը յարեթական և սեմական լեզուների մէջ աւելի մօտ է, քան սեմականի ու քամականի և կամ քամականի ու յարեթականի:

Այժմ պարզ է, թէ ինչ ազգերի կամ ժողովրդների հետ կարող էին անմիջական շփումն ունենալ եկուոր հրնդարոպարի յաղթող Հայերը: Սրանցից մէկը կամ մի քանիսը ձուլուելով տիրապետող արիական տարրերի հետ, մոցրել են վերջինի լեզուի մէջ զգալի փոփոխութիւններ: Այսպէս օր՝ յայտնի է, որ Աւրարտացոց կամ Խալդերի մնացորդները երկարատև յուսահատ կոխւ մղելուց յետոյ յաղթող Հայերի գէմի սովորուած էին ապաւինել Աև ծովի կողմերը (Համեմ՝ «խաղտիք» ժողովուրդը): որ ընակւում էր փոքր

\*) Основн. таблицы къ грамматикѣ древне-грузинск. языка, С. Пт. 1908, Грамматика чанскаго (лазскаго) языка, С. Пт. 1910 etc.

Հայքից հիւսիս և որ Քսենոֆոնի մօտ կոչւում է շալճա՛ռ): Պէտք է ենթադրել որ Հայրենիքում մնացած մասը ձուլուեց յաղթական հնդերոպացիների հետ:

Այսպիսով Հայերէնի հնդերոպական տեսակէտից ուստումնասիրութեան զուգընթաց խիստ կարեոր է զատել նաև ոչ հնդերոպական տարրերը՝ որոնց գոյութիւնը Հայերէնի մէջ կասկածից գուրս է և որոնք անշուշտ մուտք են գործել հնդերոպացի Հայերի լեզուի մէջ յիշեալ բնիկների լեզուներից: Այդ ուղղութեամբ կատարուած հետազօտութիւններից յիշենք հետևեալները:

Մենք ծանօթացնք արդէն ենսենի կարծիքի հետ Հաթթերի նկատմամբ, որ սակայն ընդունուած չէ զիտութեան կողմից: Յիշենք այժմ նորվեգիացի զիտնական Առֆուս Բուգդէի կարծիքը, (Etrurkicsé und Armenisch, 1890), որի համաձայն Հայերէնը ազգակից է էտրուսկերէնին: Այս կարծիքը նոյնպէս մերժուած է զիտութւինից:

Անհամեմատ աւելի կարեոր է Մառի տեսութիւնը, որ ներկայացնում է խիստ արժէքաւոր գիտական կոնցեպցիա: Մառը Հայաստանի բնիկներ համարում է յաբեթական լեզուներ գործածող ժողովրդներ, այդ լեզուները որոշ պատմական փոփոխութիւններով գործածական են նաև ներկայումս, ուրեմն զիտութիւնը հնարաւորութիւն պէտք է ունենայ զատել Հայերէնի յաբեթական տարրերը: Այդպիսով Մառի տեսութիւնը կոչւած է լրացնելու Հայկական լեզուարանութեան միւս նշանաւոր կողմը, որ գուրս է մնում հնդերոպական լեզուարանութեան կոճկետենցիայից և այդպիսով Մառի յաբեթական թէորիային սպասում է մեծ ապագայ:

Մառը չունի այդ մասին տպած ամբողջական աշխատութիւն (տպուած են միայն յօդուածներ), բայց հաւաքել է Հարուստ նիւթ, որ աւելի մշակուած ձեռվ լոյս կընծայի ապագայում:—

1. Հայկական ճիւղի հնագոյն ներկայացուցիչն է զրաբարը, արիստոկրատական (նախարարական) խօսակցական լեզուն, որ որպէս զրական լեզու յայտնի է դարձել եւ դա-

րից Ք. յ. և գործածութեան մէջ է եղել մինչեւ 19-րդ դարի առաջին կեսը, իսկ որպէս եկեղեցական լեզու, մասսամբ և պաշտօնական գրութեանց մէջ, գործածական է և այժմ։ Գրաբարն ունի ճոխ գրականութիւն հարուստ բովանդակութեամբ և գրութեան համար գործ է ածում Մեսրոպ Մաշտոցի յօրինած, կամ աւելի ճիշտ՝ լրացրած ու մշակած տառերը (նախնական Դանիելեան ասորա-յունական այբուբենից<sup>\*)</sup>):

Ե. դարբեդասական գրաբարը յետագայում ենթարկուելով հարեան լեզուների և հայկական բարբառների գօրեղ ազգեցութեան, աստիճանաբար կերպարանափոխուել է, և միայն Միսիթարեան հայրերի երկերում մենք տեսնում ենք ուժեղ ձգտում վերականգնելու գրաբարի նախնական տիպը։

Գրաբարի զարգացման մէջ ե. դարից մինչեւ ԺԹ. գարբկարելով հարելի է որոշել մի քանի շրջաններ. 1) Դասական շրջան 5—8 դար. այս շրջանում ոչ միայն կազմակերպում է լեզուն, այլ և հարստանում է փոխառութիւններով յունաբէնից, մասնաւանդ զիտական տեսմիններով; 2) Բազրատուննաց շրջան 9—11 դար. լեզուն կորցրել է կենցանութիւնը և աղքատ է. 3) Կիլիկեան շրջան 11—14 դար. նկատելի է բարբառների գօրեղ ազգեցութիւնը. նոյնը նկատում է լեզուի մէջ նաև բուն երկրում՝ Հայաստանում; 4) Եջմիածնի շրջան 15—19-րդ դար. լեզուն բոլորովին մեռած է և գործ է ածւում միայն զրագետների սահմանափակ շրջանում։

2. Հայկական ժողովրդական լեզուն, որ կոչւում է աշխարհաբար, գոյութիւն է ունեցել շատ հին ժամանակներում: զուգընթաց գրաբարին: Հին արձանագրութիւնների մէջ, մասամբ և գրական երկերում նկատելի են, երբեմն նոյն իսկ գերիշխող են աշխարհաբարի ձևեր. 13—14 դարի հեղինակ Մմատ սպառապետը գրել է իւր կիլիկիացի պատ-

<sup>\*)</sup> Մեսրոպեան այբուբենում տառերի կարգը համապատասխանում է յունականին, միայն մէջ ընդ մէջ զետեղուած են այնպիսի տառեր, որոնք արտայայտում են յունաբէնին անսովոր հայկական հնչիւններ։

մութիւնը («Ամբատայ տարեզրութիւնք» 951—1276 թ.) և այլ երկերը (թարգմանութիւն Անսիզացն Անտիռքայ և այլն) պաշտօնական լեզուով, որ խառնուրդ է գրաբարի և աշխարհաբարի։ Աւելի առաջ, 8-րդ դարից սկսած, աշխարհաբարը գործ է ածւում արձանագրութիւնների մէջ։ 13—14 դարի հեղինակ Յովհանն Երզնկացին, որ կազմել է Դիտնիսիոս Թրակացու քերականութեան (թարգմանութիւն 7-րդ դարի) մեկնութիւնը իւր նախորդների (Գր. Մազիստրոսի և այլն) աշխատութեան հիման վրայ, յիշում է 7 «եզերական» հայկական բարբառներու որոնց պէտք է աւելացնել ութերորդը—Ոստանիկը (Արարատեանը\*):

Այսպիսով մենք կարող ենք ընդունել հայկական ճիւղի միջին շրջանի լեզուն—միջնադարեան աշխարհաբարը, որի ժամանակակից գործածութիւնը գրականութեան մէջ մեծ չափերով մենք տեսնում ենք Կիլիկիայում։

3. Նոր Հայկական լեզուն է արդի աշխարհիկ լեզուն, որ ունի գրական երկու ներկայացուցիչներ—արևելահայ և արևմտահայ գրական լեզուները և բազմաթիւ բարբառներ։

Հայ բարբառաբանութեան ուսումնասիրութիւնը գեռ սաղմային գրութեան մէջ է, մինչդեռ այդ ուսումնասիրութիւնից է կախուած մի շարք կարգինալ հարցերի վերջնական լուծումը։ Բարբառների ուսումնասիրութիւնից յետոյ միայն հնարաւոր է կազմել լեզուի պատմութիւնը, պարզել հայերէն նախալեզուի տիպը և թերեւս մի շարք ուղղումներ կամ լրացումներ մոցնել հնդերոպական լեզուաբանութեան մէջ։

Նոր բարբառները սովորաբար բաժանւում են երկու խմբի—արևելեան և արևմտեան (կամ ոռւսահայ և թիւրքահայ բարբառներ)։ Պէտք է յիշել նաև Հր. Աճառեանի վերջերս առաջարկած նոր բաժանումը\*\*), որ արժանացել է

\* ) «Եւ դարձեալ զքո լիզուիդ գիտելն բաւանդակ զբառն եզերական, որպէս զկորճայն և զճայեցին, զմութայինն և զջորըրդ հայեցին, և զԱպերացին և զԱրւանին և զԱրցախայինն, այլ մի միայն զմիջերկըեայսն և զոստանիկսն»։

\*\*) Հր. Աճառեան, Հայ բարբառագիտութիւն—Էմինեան ազ-

Մէյէ և Քարստ հայագետների հաւանութեանը այն է 1) —ում ճիւղ, 2) կը—ճիւղ և 3)—ել ճիւղ), որ սակայն մեզ թւում է անյաջող:

Մինչեւ այժմ ուսումնասիրուած են Թիֆլիզի, Ախալցիայի (Տուման), Ագուլիսի (Արդսեան), Մուշի (Մսերեան), Էկհահայոց (Հանուշ), Վանի, Դարաբաղի, Սուչովյի, Աւալանքէկի (Աճառեան), Արարկիրի (Դաւիթբէկ), Եւդոկիոյ (Գաղպանեան) և Ակնայ (Գարրիելեան և Մաքսուդեան) բարբառները: Լաւագոյն ուսումնասիրութիւնները պատկանում են Սարգսեանցին, պռոք. Տումանին և պռոք. Մսերեանցին:

IV Ալբանական նիւղ.—Գլխաւոր ներկայացուցիչն է Ալբաներէնը, որ տարածուած է Բաքքանեան թերակզգում և Խտալիայում և որի յիշատակարանները յայտնի են 11-րդ դարից: Ալբաներէնի արգի բարբառները հետեւեալներն են. Գեղիական (Հիւսիսային), Տուկական (Հարաւային) և գաղութների բարբառներ հարաւային Խտալիայում և Յունաստանում: Լեզուն լի է սլաւոն լեզուներից, յունաբէնից, ռոմանական և թիւրքերէն լեզուներից փոխառած բառերով:

Ալբանական ճիւղին հաւանօրէն պատկանել են հարաւային Խտալիայի հին Մեսսապիական լեզուն, հին Իլիրականը և թերեւ հին Վենետների լեզուն (Հիւսիսարեւեան Խտալիայում):

V Յունական նիւղ. 1. Հին յոնարէնը բաժանուած էր բազմաթիւ բարբառների, որոնք բաւական հարազատ պահուած են արձանադրութիւնների մէջ: Մօտաւորապէս 1000 թից մինչև 300 թիւը Ք. ա. նրանք ներկայացնում են հետեւեալ պատկերը. — 1) Յոնիական—Ատտիկեան բարբառ, որ իսկապէս երկու բարբառ է—հին և նոր յոնիական (Հոմերոս և Հերոդոտ) և Ատտիկեան (ոսկեդար): 2) Դորիական 3) Էլիսի բարբառ 4) Հարաւ արևմտեան բարբառներ (Լոկրիսում, Էտոլիայում, Եպիրոսում և այլն) 5) Արգագրական ժողովածու, հատոր Ը. Մուկուա—Նոր Նախիջևան 1911 թ. համեմ. նոյն հեղինակի Classification des dialectes arméniens. Paris, 1909.—

կաղիո—Կիպրական, 6) Հոլական (Լեզոս, Հիւսիսային Թեսալիա) և 7) Պամփիլիայի բարբառ:

Առանձին տեղէ գրաւում Հոմերոսի վիպական լեզուն, որով գրած են Խլիականը և Ոգիսականը—Ծգվիդայից յետոյ ամենաշին հնգերոպական յիշատակարանը: Հոմերոսի լեզուն արհեստական է, և չէ հասել մեզ նախնական գրութեամբ: Վեպը գրուած է եղել Էոլական հողի վրայ, յետոյ փոխադրուել է յոնիական միջավայր և այդ պատճառով լեզուն խառնուրդ է Էոլականի և յոնիականի: Ուապսոդները ևս աւելացրել են նոր լեզուային տարրեր, իսկ Աղեքսանդրեան գիտնականները ենթարկել են լեզուն նոր փոփոխութիւնների:

Ատտիկեան բարբառը Ե. գարից սկսած դառնում է զլիսաւոր գրական լեզուն. շնորհիւ մանաւանդ ատտիկեան արձակ ճոխ գրականութեան ազգեցութեան, միւս բարբառները տեղի են տալիս և դուրս են զալիս դորձածութիւնից և Ատտիկեան բարբառը Գ. գարում Ք. ա. գրական լեզուն ներկայացնելուց զատ դառնում է կրթուած դասակարգի ընդհանուր դորձածական լեզուն: Ապա ընդունելով միւս բարբառներից նորանոր տարրեր, Ատտիկեան գրական լեզուն դառնում է ընդհանուր յունական լեզու (չօւրի, այսինքն ոչ առողջ ծանութեան), որ մինչեւ 5-րդ դար Ք. յ. չեղոքացնում է միւս բոլոր բարբառները, բացի դորիականի Լակոնական ենթարարբառից, որ շնորհիւ շրջապատող սլան տարրերի մնում է առանձնացած դրութեան մէջ:

2. Միջին յունարէնն է Բիւզանդերէնը, որ Կոյնէի գարգացման մի նոր ֆազիսն է և ունի հարուստ քրիստոնէական գրականութիւն:

3. 16-րդ դարուց սկսում են երեան գալ նոր յունական բարբառները, որոնք սկսել եին զարգանալ բիւզանդերէնում: Այդ բարբառները կարելի է բաժանել երկու մեծ խմբի—Հիւսիսային և Հարաւային. նրանք բոլորը ծագել են ուրեմն ոչ թէ հին յունական բարբառներից, այլ Կոյնէից, բացառութեամբ այժմեան Զակոնական բարբառի, որ լակոնականի շարունակութիւնն է:

Յունական գրութիւնը փոխ է առած Փիւնիկեանից և սկզբում նա ևս եղել է աջից դէպի ձախ: Հին ժամանակ այդ գրութիւնը գործ է ածուել յունական բարբառներում որոշ փոփոխութիւններով:

Յունական ճիւղին է պատկանում հաւանականաբար և շին մակեղոնական լեզուն, որի մասին դժուար է ամբողջական գաղափար կազմել:

Նախ քան հեղերոպացի յոյների Յունաստան մտնելը այնտեղ գոյութիւն է ունեցել տեղական, այսպէս կոչուած Ս'իւկենէի բարձր քաղաքակրթութիւնը, որի մասին գաղափար են տալիս մեզ 19-րդ դարում կատարած մի շարք պեղումներ Յունաստանում, կրետէում և Փոքր-Ասիայում (Ելիմանի և այլոց ձեռքով):

VI Ետալական (իտալիկ) նիւղ \*). — Այս ճիւղին պատկանող լեզուների նախնական հայրենիքը Իտալիան է. այնտեղ գոյութիւն ունեն հետեւել լեզուները. —

1. Վուլգար (ռամկօրէն) լատին, որ գործածական էր սկզբում Հռոմում և նրա շրջակայքում և որոնցից հատուածներ հասել են մեղարձանագրութիւնների լեզուում և մի քանի հեղինակների (օր. Պլաւտի, Տերենցիոսի) գրուածքներում: Հռոմայեցոց տիրապետութեան ժամանակ այդ լատինը տարածուեց գաղութներում և առհասարակ նուաճուած երկրներում և ընդունելով իւր մէջ նոր տարրեր զանազան երկրներում զանազան լեզուներից, առաջացրեց զանազան ռոմանական լեզուներ:

2. Լատիներէնը (գրական լեզուն): սա Հռոմի գրական և կրթուած շրջանների խօսակցական լեզուն է, որ առաջացել է նոյն Վուլգար լատինից: Լատիներէնի յիշատակարանները շատ հին են (արձանագրութիւններ 8—7 դարից), բայց նա յայտնի է մեղ գլխաւորապէս Գ. դարից նախ քան Քրիստոս, երբ սկիզբն է առնում հռոմէական դասական:

\* ) Իտալական մեզնում գործ է ածւում «Իտալիական»ի փոխարէն և նշանակում է Իտալիային (արդի) վերաբերեալ =italienisch, итальянскій. Իտալական մենք գործ ենք ածում italisch, итальянскій մորով:

զրականութիւնը: Լատիներէնն, ինչպէս յայտնի է, դարձաւ տիեզերական լեզու և որպէս արշեստական լեզու գործածական է մինչեւ այժմ: Լատինական գրութիւնը, որ ինչպէս աեսանք, շատ հին է, առաջացել է յունականի դորիական տիպից: Լատիներէնին շատ մօտիկ ֆալիսեան բարբառով պահուած է մի հին արձանագրութիւն, որտեղ գրութիւնը սկսում է աջից դեպի ձախ:

3. Հին իտալական լեզուներ են նաև Օսկերի լեզուն (հարաւային իտալիայում) և նրա աղքակից Սաքելիական բարբառները և Ումբրերի լեզուն (միջին իտալիայում), որին մօտ է Վոլտկերի լեզուն: Արանցից պահուած են չնչին հատուածներ արձանագրութիւններում: Այս լեզուները նոյնպէս տեղի տուեցին վուլգար լատինին, որից, ինչպես տեսանք, առաջացան զանազան տեղերում զանազան

4. Նոր իտալական կամ ոռմանական լեզուներ—1) իտալերէնը, 2) ֆրանսերէնը, 3) պոռվանսի լեզուն, 4) իտապաներէնը, 5) փորթուգալերէնը, 6) ոռւմիներէնը և 7) ռեթորոմաներէնը (հարաւ-արևելեան Շվեյցարիայում և Տիրոլում): Ենորհիւ լատիներէնի ընդարձակ գործածութեան ոռմանական լեզուները չեին կարող շուտով գրական լեզուներ դառնալ: Բայց դեռ 6.-րդ դարից սկսած լատիներէնում երեւում են ոռմանական ձեեր, իսկ անդրանիկ ոռմանական յիշատակարանը (երդմնագիր) գրած է 842 թ. ֆրանսերէն լեզուով:

Ոռմանական լեզուների համեմատական ուսումնասիրութիւնը ներկայացնում է մեզ ոռմանական նախալեզուի պատկերը, որ բոլորովին համապատասխանում է գրաւոր յիշատակարաններից մեզ յայտնի Վուլգար լատինին.

Մի ժամանակ իշխող էր այն կարծիքը, իբր թէ յունական և իտալական ճիւղերը սկզբում իրար հետ աւելի մօտ աղքակցական կապեր են ունեցել, քան միւս հնդկուական լեզուների հետ. բայց այդ կարծիքը չը հաստատուեց:

VII Կելտական նիւդ.—Կելտական ճիւղին պատկանող 1. Հին լեզուները շատ տրածուած էին Արևմտեան Եւրոպայում—Վերին իտալիայում; Ալպերում, հարաւային Գեր-

մանիայում։ Թրանսիայում և Խապանիայում։ Այդ լեզուները շատ շուտ տեղի տուեցին այլ լեզուների, այնպէս որ նրանցից մենք ունինք միայն յատուկ անուններ և պատահական բառեր, որոնք պահուել են կլասսիկ հեղինակների երկերում և հին արձանազրութիւնների մէջ։ Այդ կելտական հին լեզուներից մեզ համեմատաբար աւելի յայտնի է զալլերի լեզուն։

2. Նոր կելտական լեզուները բաժանւում են երկու խմբի. — բրիտանական և գելական։

Բրիտանական խմբին պատկանում են. 1) Կիմրերէնը (Աւելսում), 2) կորնուէլսի լեզուն, որ անյայտացել (մեռել) է 18-րդ դարում; 3) Բրիտանական կամ Արմնիկ՝ որով խօսում են ֆրանսիական Բրետանի բնակիչնեղը, որոնք գաղթել են Բրիտանիայից 4-րդ դարի վերջը Ք. Հ. —

Գելական խումբը կազմում են իրանդիայի, Շոտլանդիայի (կամ իսկական Գելական) և Մէն կղզու բարբառները։ Իրլանդական գրաւոր յիշատակարանները հասնում են մինչև 8-րդ դարը Ք. Հ., իսկ գելական յիշատակարաններն աւելի հին են։ Դրութիւնը լատինականն է։

VIII Գերմանական նիւլ. — բաժանւում է երեք խմբերի. Դոթական (արևելեան գերմանական), Աքանզիանաւեան (հիւսիսային գերմանական) և արևմտեան գերմանական։

Դոթական խումբը յանձին վեստգոթերէնի պահել է հին գերման լեզուների ամենշանաւոր գրաւոր յիշատակարանը։ Այդ յիշատակարանը Աստուածաշնչի թարգմանութիւնն է, որ կատարել է Դ. դարում վեստգոթերի եպիսկոպոս Վուլֆիլան։ Մեզ հասել է ոչ ամբողջ թարգմանութիւնը այլ մի քանի հատուածներ հին և նոր կտակարանից և Յովհաննու աւետարանի մեկնութիւնից \*):

Բացի Աստուածաշնչի թարգմանութիւնից — յունական և լատինական աղբիւրներից ևս յայտնի են գոթական յա-

\* ) Այդ յիշատակարանից աւելի հին են ուռեներ, սակայն նրանք աւելի կցկուուր են և այդ պատճառով լեզուաբանական աշխատութիւնների մէջ գերման լեզուների ներկայացուցիչ համարառում է գոթերէնը։

տուկ անուններ և հատուկոր բառեր։ Խրիմի Օստգոթերի լեզուից ևս մեզ հասել են բաւական չափով հատուածներ, իսկ միւս գոթական լեզուները, ինչպէս օր վանդալների և բուրգունդների լեզուն թողել են շատ չնչին մնացորդներ։

Սկանդինավեան խումբ, այդ խմբում պէտք է տարբերել նախ 1) հին սկանդինավերէնը, որով պահուած են գերման լեզուի ամենաշին նմուշները ուռւական (գաղտնի) արձանագրութիւնների մէջ, որոնք հասնում են մինչև Գ. դարը Ք. յ. 3) Վիկինգների շրջանում (մօտ 700—1050թ.) այդ ընդհանուր Սկանդինավեան լեզուն արդէն բաժանում է երկու բարբառների—արևելեան և արևմտեան, որոնցից ծագում են նվերական ու Դանիական (արևելեան) և Իսլանդական ու Նորվեգական (արևմտեան) լեզուները։

Մինչև ռեֆորմացիայի շրջանը այդ լեզուները յայտնի են Հին Նվերական, Հին Դանիական, Հին Իսլանդական և Հին Նորվեգական անուններով։ Դրանցից աւելի հինը և յայտնին է Հին Իսլանդերէնը, որով պահուել են հռչակաւոր կզկանկրը (12 դար)։

3. Արևելմտեան գերմանական խումբը բաժանում էր հետեւեալ հին լեզուների.—Անգլոսաքսերէն, ֆրիզերէն, հին նիդեռլանդերէն, հին Սաքսոներէն և հին վերին գերմաներէն (Althochdeutsch). 1) Անգլոսաքսերէնի յիշատակարանները սկսում են 8-րդ դարից Ք. յ.—օրանից է առաջացել անգլերէնը, որ իւր մէջ ընդունել է բազմաթիւ ֆրանսերէն փոխառութիւններ։ 12—15 դարը նա կոչում էր միջին անգլերէն, իսկ այնուհետեւ նոր անգլերէն։ Վերջինիս բարբառներից տիրող է հանդիսացել հարաւային կամ Լոնդոնի բարբառը, որ այժմ յայտնի է անգլերէն անունով։

2) Ֆրիզերէնը յայտնի է գառնում միայն 14-րդ դարից և գոյութիւն ունի մինչև այժմ և բաժանում է երեք բարբառների (հիւսիսային, արևելեան և արևմտեան)։

3) Հին Նիդեռլանդերէնի շրջանը տեսմ է մինչև 1300թ., որից յետոյ մինչև 1500թ. նա յայտնի է գառնում որպէս միջին նիդեռլանդերէն, իսկ այնուհետեւ՝ նոր նիդեռլանդերէն։ Վերջինս ունի չորս բարբառ, որոնցից

մէկն է և այ ժմաւայ հոլլանդերէնը:

4) Հին Սաքսոներէնի հնագոյն յիշատակարանն է յայտնի Heliand-ը (9-րդ դար), 1200—1500 թ. այդ լեզուն զրում է Միջին ստորին գերմաներէնի անունը (Mittelniederdeutsch) 1500 թւից սկսած նա կոչւում է նոր ստորին գերմաներէն (Neuniederdeutsch) կամ Plattdeutsch.

5) Հին վերին գերմաներէնը (Althochdeutsch) տեսում է 8—12 դար, որից յետոյ նա մտնում է միջին (Mittelhochdeutsch) շրջանը: Այս լեզուով են պահպան յայտնի նիւքելունգները և այլն: Ուժորմացիայի շրջանից սկսում է նոր գերին գերմաներէնը (Neuhochdeutsch), որ և գառնում է Գերմանիայի ընդհանուր գործածական գրական լեզուն: Որպէս խօսակցական լեզու նա բաժանվում է ներկայումս մի շաբք բարբառների, որոնք կազմում են երկու խումբ—Oberdeutsch և Mitteldeutsch.

IX Բալթիկեան կամ լիթուական ճիւղին պատկանում են լիթուերէնը (Литовскій языки, litauisch) և լատիշերէնը և այժմ արգեն մեռած պրուսերէնը:

1. Լիթուերէնը գործածական է այժմ Ռուսաստանում՝ Կովոյի, Վիльнոյի և Գրոդնոյի, նաև Սուվալկի նահանգներում և Պոռւսիայի ռուսական սահմաններում: Այստեղ նա արագօրէն մեռնում է գերմաներէնի ազգեցութեան տակ:

2. Լատիշերէն խօսում են Կուրլեանդիայի, Լիֆլեանդիայի և Վիտեբսկի նահանգներում: Կան լատիշական գաղութներ նաև Պոռւսիայում:

Այդ երկու լեզուներն իրար աւելի մօտ են, քան պռուսերէնին: Լիթուերէնի և լատիշերէնի հնագոյն յիշատակարանները համեմատաբար նոր ժամանակներում են զըրուած: Դրանք կրօնական գրուածքներ են—Լատեխիզիս և լ., հրատարակուած 16-րդ դարում: Լիթուերէնը վերջերս հընդերուպական լեզուաբանութեան մէջ շատ կարեոր նշանակութիւն է ստացել չնայած այն հանգամանքին, որ նրա յիշատակարանները շատ նոր են համեմատած միւս հընդերուպական յիշատակարանների հետ:

3. Պոուսերէնը մեռել է վերջնականապէս 17-րդ դարում գերմաներէնի ճնշման տակ, թողնելով լեզուական մնացորդներ մի քանի անկատար յիշատակարաններում։ Դրանք լութերական կատեխազիսներ են—մէկ մեծ և երկու փոքր, որ թարգմանուած են գերմաներէնից 16-րդ դարում և լիքն են սխալներով։ Ժամանակով աւելի հին է մի փոքրիկ (էլլինդեան) գերման-պոուսերէն բառարան, որ հաւանօրէն կազմուած է 15-րդ դարում։ Այժմուայ պոուսիացոց մի մասը հին պառւսների ոերունքն է, որ վազուց արդէն գերմանացել է։

Խ Սլաւնական նիւղը բաժանուում է երեք խմբերի՝ հարաւային, արևելեան և արևմտեան։

1. Հարաւային խմբին պատկանում են բուլղարերէնը, սերբո-խորուաթերէնը և սլովիներէնը, նոյնպէս և հին եւ կեղեցական սլաւոներէնը։

1) Հին կամ եկեղեցական սլաւոներէնն այն լեզուն է, որով սլաւոնական լուսաւորիչները—կիւրեղ և Մեթոդիոս (Կիրիլ և Մեօօդի) և նրանց աշակերտները թարգմանել են Ա. Գիրքը և ժամասացութեանը վերաբերեալ Պղքեր։ Դիտութեանը յաջողուեց պարզել որ եկեղեցական սլաւոներէնը եղել է հին բուլղարերէնի մակեդոնական բարբառուներից մէկը, ուստի գիտական գրուծքներում այդ լեզուն կոչւում է նաև Հին բուլղարերէն։ Դա սլաւոնական ամենահին ձևեր ունեցող լեզուն է, սլաւոնների սանսկրիտը և հանգիսանում է հնդկերոպական լեզուաբանութեան մէջ որպէս սլաւոներէնի ներկայացուցիչը։ Շնորհիւ այն հանգամանքի, որ հին սլաւոներէնը որպէս եկեղեցական լեզու գործածութեան մէջ է եղել զանազան սլաւոն ազգերի մէջ (ռուս, սերբ, բուլղար ևայլն), նա ընդունել է իւր մէջ այդ ազգերի լեզուներից նորանոր տարրեր և այդպիսով առաջացել են սերբական, ռուսական և այլն, տիպի եկեղեցական լեզուներ, որոնք զգալի կերպով տարբերուում են իսկական եկեղեցական կամ հին սլաւոներէնից։—Հին սլաւոներէնի հնագոյն յիշատակարանները յայտնի են 11-րդ դարից (Զոգրաֆեան, Մարիինեան ևլն, աւե-

տարաններ ելն), իսկ վերջերս գտնուած մի արձանագրութիւն բուղարական Սամուել թագաւորի, կրում է 993 թւականը: Գրութեան ձեն է սլաւոնականը՝ երկու տիպի. Գլագոլական և կիրիլլիցա, որնք երկուն ել յունական ծագումն ունեն:

2) Թուղարերէն. Հին սլաւոներէնի մասին ասածը որոշ չափով վերաբերում է և բուղարերէնի հին շրջանին, բայց հին բուղարերէնը տարբերում է հին սլաւոներէնից: Բուղարերէնն ունի նաև միջին և նոր շրջաններ, մի քանի բարբառներով: Միւս հարաւային լեզուներն են 3) սերբերէնը 4) խրովաթերէնը և 5) սլովիներէնը համապատասխան բարբառներով:

2. Արևելիան իամ սուսական խումբը բաժանւում է երեք բարբառների. վելիկոռոսների, մալոռոսների և բէլոռուսների, որնցից վելիկոռոսականը և բէլոռոսականն իրար աւելի մօտ են:

1) Վելիկոռոսական (մեծ սուսական) բարբառը երկու մեծ ենթաբարբառներ ունի. հարաւային ճշական (օ հնչիւնն առանց շեշտի արտասանւում է: Ա) և հիւսիսային՝ ծրակակի: Հարաւային ենթաբարբառներից է նոյնպէս Մոսկուայինը, որ ժամանակի ընթացքում իւր մէջ ընդունելով որոշ տարբեր ռուսական տիպի եկեղեցական լեզուից և հիւսիսային բարբառներից, առաջացրեց ռուսաց նոր զրական լեզուն, որ կոչւում է սովորաբար ռուսերէն:

2) Մալոռոսսկան (փոքր սուսական) բարբառը նոյնպէս ունի ենթաբարբառներ և ինքնուրոյն գրականութիւն: Նոր շրջանի մալոռոս հեղինակներից ամենանշանաւորն է հոչակաւոր Շեշենկօն, որ Միցկեիչի և Պուշկինի հետ պատկանում է ալաւոն ամենամեծ բանաստեղծների թւին:

3) Բէլոռոսական (սպիտակ սուսական) բարբառը զրական լեզու չէ և ինչպէս տեսանք, իւր կազմով աւելի մօտ է վելիկոռուսականին: Ուռւս լեզուի ամենահին յիշատակարանը համարւում է Օստրոմիրեան աւետարանը, որ գրուած է 11-րդ դարում (1056—7թ.):

3. Արևմտեան խումբը կազմում են Զեխերէնը, Սլովակերէնը, և հելերէնը, Կաշուբերէնը, Սորբերէնը (լյաշովկան,

lausitzisch, wendisch, sorbisch) և այժմ արգեն մեռած պոլաբերէնը: 1) Զեխերէնի հնագոյն յիշատակարանը գրածէ 13-րդ դարում. չեխերէնին մօտ է սլովակերէնը (Աւստրիայում): 3) լեհերէնի հնագոյն յիշատակարանները համառում են մինչև 14-րդ դար: Լեհերէնին մօտ է 4) կաշուբերէնը որ զործածական է Դանցիցի մօտ Բալթիկ ծովի ափին: Կաշուբերէնին ցեղակից էր ներկայումս մեռած 5) պոլաբերէնը, այսինքն Լաբայի կամ Լիբայի ափերում ապրող սլաւոնների լեզուն: Պոլաբերէնից մեզ հասել են փոքր մնացորդներ՝ բառարաններ և այլ գրութիւններ 17—18 դարերից: 6) Սորբերէնը երկու հատուած ունի-վերին և ստորին սորբերէն: Սորբերն ապրում են Լուզիտանիայում, որ գտնւում է այժմ Սաքսոնիայում և Պոուսիայում: Հին յիշատակարանները մնացել են 16. րդ դարից:

Սրկամտեան սլաւոնները զործ են ածում լատինական գրութիւն մի քանի լրացուցիչ պայմանական նշաններով: Նրանցից լեհերէնը և չեխերէնն ունին ճոխ և հետաքրքիր դրականութիւն:

Գիտնականները սովորաբար միացնում են բալթիկեան և սլաւոնական ճիւղերը և ընդունում են մի ընդհանուր լալթո-սլաւոնական ճիւղ նոյն հիմքերով, ինչ հիմքերով ընդունում է, մի հնդկա-իրանական ճիւղ: Անվիճելի և հատատ կարելի է համարել այն փաստը, որ բալթիկեան և սլաւոն ցեղերը նախապատմական շրջանում ապրել են մի ընդհանուր կեանքով, ինչպէս հին հնդիկներն ու իրանացիք, որ հաստատում է բազմաթիւ լեզուական երկոյթներով:

Մի ժամանակ տարածուած այն կարծիքը, իբր թէ գերմանական և բալթոսլաւոնական ճիւղերը իրար հետ աւելի մօտիկ ազգակցութիւն են ունեցել, չէ կարող ընդունելի համարուել այժմ:

---

Սրանք են մեզ յայտնի հնդկաբոպական լեզուները. այդ լեզուների մի մասը մեռած լեզուներ են և յայտնի են մեզ

միայն գրաւոր յիշատակարաններից, իսկ միւս մասը — կենդանին: Սակայն միայն սրանք չեն կարող լինել բոլոր հընդերոպական լեզուները, անշուշտ շնորհիւ զանազան անբարեյաջող պայմանների անհետ կորել են շատ կամ քիչ թւով հնդերոպական լեզուներ, որոնցից ոմանք կարող էին պատկանել հնդերոպական ընտանիքի այս կամ այն ճիւղին, իսկ միւսները կարող էին լինել ընտանիքի ինքնուրոյն ճիւղեր:

Հաւանականաբար այդպիսի ինքնուրոյն ճիւղ պէտք է համարել վերջերս յայտնուած մի հնդերոպական լեզու, որ կոչում է թոխարերէն:

1908 թ. Թուրքեստանում շնորհիւ գերմանացի գիտնականների կատարած պեղումների բացուել են երբեմն Բակտրիայում ապրող և կլասսիկներին Tochari անունով յայտնի մի հին հնդերոպական ժողովրդի բաւական բարձր քաղաքակրթութեան հետքեր, որի վրայ նկատելի է, հընդկական և յունական քաղաքակրթութեան ազդեցութիւն:

Այդ ազգի գրաւոր յիշատակարանները որոնք մեծ մասամբ երկլեզուեան են (թոխարերէն-հնդկերէն), ներկայացնում են զլիսաւորապէս բուգղիստական թարգմանական գրականութիւն: Գրութիւնը սանսկրիտականին նման է, իսկ լեզուն, որի մէջ բարբառներ ևս նկատելի են, կազմում է հնդերոպական ընտանիքի բոլորօվին անկախ մի ճիւղը, գրաւելով միջին տեղ իրանական և յունական լեզուների\*):

Ուրիշ հնդերոպական լեզուներ, որոնցից հասել են մեզ միայն պատահական բառեր, բայց այդ մնացորդների հիման վրայ համարւում են հնդերոպական, հետեւեալներն են:

Թրակիականը եւ Փոխօթիականը, որոնք մօտ են երեւում հայերէնին, Սկիւթերէնը, որ ըստ Վաեվոլոդ Միլերի իրանական լեզու է և ազգակից օսերէնին: Մակեդոնականը, որ ցեղակից է երեւում յւանարէնին, հլլիրիականը, որ հա-

\* ) Հայագէտ լեզուաբան Մէյէն գտել է թոխարերէնի և հայերէնի մէջ մի շարք նմանութիւններ, որոնց մասին տ. Հր. Աճառեանի «թոխարերէն և հայերէն» յօդուածը, Հանդէս ամսօրեայ 1912 թ. № 1.

ւանականաբար ալբանականին էր ազգակից և որին մօտ են եղել Միսսապականը և Նապիկերէնը Ապենինեան թերակղզում: Թերես նաև Վենետիների լեզուն: Վերջապէս պէտք է յիշել նաև թուսարերէնի հետ միասին Թուրքեստանում վերջերս յայտնուած հնդկական և իրանական մի քանի բարբառները՝ որոնք մինչև այժմ անձանօթ էին զիտական աշխարհին:

Հնդկրոպական բոլոր ճիւղերն ունեցել են իրենց նախալեզուները, որոնք պարզուամ են այդ ճիւղերից իւրաքանչիւրի բարբառների համեմատական ուսումնասիրութեամբ: Իսկ այդ բոլոր նախալեզուների համեմատական քերականութիւնը բաց է անուամ մեր առաջ հնդկրոպական ընդհանուր նախալեզուի պատկերը, ցոյց տալով վերջինիս ֆոնիտիքական, մորֆոլոգիական և շարահիւսական կազմը և բառամթերքը:

Հնդկրոպական լեզուների համեմատական ուսումնասիրութեան հիմքը գրեց Բուլլ 1816 թ., իսկ այդ լեզուների պատմական ուսումնասիրութեամբ առաջին անդամ զբագթւեց Յակոպ Գրիմմ (1819 թ.): Այդպիսով այդ երկու դիտնականներն են համարւում հնդկրոպական համեմատական-պատմական լեզուաբանութեան հիմնադիրները:

Լեզուի տեսական ուսումնասիրութեամբ զբագլուամ էին և Բուլլից առաջ, այսպէս-գեռ հին հնդիկները և յոյները (սրանց հետեւողութեամբ և հռովմայեցիք) զբագլուել են լեզուով: 18-րդ դարում եղել են նոյն իսկ համեմատական ուսումնասիրութեան մի քանի փորձեր: սակայն այդ բոլոր հետազօտութիւնները չեն ունեցել ուղիղ հայեցակէտ: Նրանց մէջ կամ միայն մի լեզու է գարձել ուսումնասիրութեան օբ'եկտ, կամ եթէ եղել են համեմատութիւններ, նրանք եղել են պատահական և անսիստեմ: Համեմատութեան համար լեզուներն ընտրել են ոչ միենոյն ընտանիքից, այլ խառնիխուռն, առաջնորդուելով դիսաւորապէս լեզուների այբբենական կարգով:

Հնդկրոպական համեմատական լեզուաբանութեան նշանակութիւնը չափազանց մեծ է: Այս գիտութիւնը ոչ մի-

կասկած չը թողեցր որ գարեր շարունակ իշխող այն կարծիքը, իր թէ բոլոր լեզուներն առաջացել են երրայեցերէնից, միանգամայն անհիմն է: Վերջ դրուեց և այն պատահական կարծիքներին, որոնց հիման վրայ այս կամ այն եզուն համարում էին միւսի գուստը ինչպէս լատիներէնը ունարէնի ևայլն: Հնդերոպական լեզուաբանութիւնը առաջին անգամ հանդէս բերեց լեզուի պատմութեան գաղափարը որ լեզուի հիմնական գաղափարն է, և բնական է, որ գիտական լեզուաբանութիւնը ծնունդ առաւ հնդերոպական լեզուաբանութեան հետ միասին:

Ասկայն բացի գրանից պէտք է նկատել, որ զիտական լեզուաբանութեան հիմքը մինչև օրս էլ հնդերոպական լեզուաբանութիւնն է կազմում շնորհիւ այդ ընտանիքի մի քանի խոշոր առաւելութիւններին: — Հնդերոպական նախալեզուն բաւական զարգացած լեզու էր, ունէր բազմաթիւ բառեր և քերեկանական ճոխ ձեւեր և շնորհիւ այդ հանգամանքի հնդերոպական լեզուներից իւրաքանչիւրը ժառանգել է, մայր լեզուից լեզուական մեծ պաշար: Այդ լեզուական պաշարը զանազան լեզուներում երկար դարերի ընթացքում ենթարկուել է բազմատեսակ փոփոխութիւնների, այդ պատճառով մենք ունենք կատարեալ հնարաւորութիւն զիտելու լեզուական փոփոխութիւնների բազմաթիւ դէպքեր: Դրա վրայ աւելանում է և այն, որ հնդերոպական լեզուների մեծամասնութիւննը պահպանել է մեզ շատ հին ժամանակներից բազմաթիւ յիշատակարաններ, որոնք միջոց են տալիս մեզ այդպիսի զիտողութիւններ անելու: Այդպիսի նպաստաւոր պայմաններ լեզուաբանութեան համար չեն ներկայացնում և ոչ մի այլ լեզուական ընտանիք և դրանով աւելի է մեծանում հնդերոպական լեզուաբանութեան նշանակութիւնը:

Աւելացնենք վերջապէս և այն հանգամանքը, որ հնդերոպական լեզուները պատկանում են ամենանշանաւոր կուլտուրական լեզուների թւին և աւելի մեծ ուշադրութիւն են գրաւում զիտական աշխարհում: Որ գլխաւորապէս կենտրոնացած է Եւրոպայում:

Պարզ է, որ գտնուելով այդպիսի պայմաններում՝ Հնդկը լեզուաբանն լեզուաբանութիւնը չափազանց յետ է թողել իրենից միւս բոլոր լեզուախմբերի զիտական ուսումնաւորութիւնը և այդպիսով բնական պահանջ է առաջացել իւրաքանչիւր անձնաւորութեան համար, որ կամենում է նուիրուել այս կամ այն լեզուի ուսումնասիրութեան, նախապէս ծանօթանալ Հնդկը լեզուաբանութեան հետո: Վերջինս ներկայացնում է այժմ մի զպրոց, որտեղ մշակուել է մեթոդ և պարզուել են բազմաթիւ զկզբունքային հարցեր: Վերջապէս Հնդկը լեզուաբանութեան մէջ կարելի է ծանօթանալ և խուսափել այն սխալներից, որոնք անխուսափելի են ամեն մի զիտութեան սկզբնական շրջանում:

Սակայն չը պէտք է մոռանալ և այն, որ իւրացնելով Հնդկը լեզուաբանութեան մեթոդները և սկզբունքները, չէ կարելի գործադրել նրանց ոչ Հնդկը լեզուների նկատմամբ կուրօրէն և առանց քննադատական վերաբերմունքի:

*Մատենագիտութիւն.—Հնդկը լեզուաբանութեան վերաբերեալ լաւագոյն երկասիրութիւնները հետեւեալներն են.*

1. Grundriss der vergleich. Grammatik der indogermanischen Sprachen, 5 հատոր, առաջին երկու հատորը կազմում է Հնդկը պական բոլոր յայտնի լեզուների համեմատական հնչիւնաբանութիւնը և ձեռաբանութիւնը, որ գորել է Լայպցիգի պոռֆ. Բուուգման, իսկ 3—5<sup>я</sup> համեմատական շարահիւսութիւնը—Ենայի պոռֆ. Գելբրիւ: Այս հսկայական գործը, որ ներկայացնում է լեզուաբանութեան զլուխ գործոցը, մասամբ լոյս է տեսել Բ. տպագրութեամբ (1886—1906):

2. Rrugmann—Kurze vergleichende Grammatik der indogermanischen Sprachen 1902—1904, 3 հատոր. կազմուած է նախորդի հիման վրայ և գործածութեան համար աւելի յարմար է:

3. A. Meillet, Introduction à l'étude comparative des langues indoeuropéennes, Բ. տպագր. 1907. սա շատ աւելի համառօտ է քան նախորդները, հեղինակը (յայտնի հայագէտ) սկեպտիկ է առաջնորդում է խիստ սուրբեկախ հայեցքով: Այս գրքի սուսերէն թարգմանութիւնը (Ա. Մեյե, Введение въ сравнительную грам-

матику индоевропейскихъ языковъ; перев. проф. Кудрявскаго, Юрьевъ 1911) լոյն տեսաւ նորերս հեղինակի յառաջաբանով և լրացումներով:

4. Meringer, Indogermanische Sprachwissenschaft, 2 Aufl. 1899, Samml. Göschen № 59. սա միայն կոնսպեկտիւ աշխատանք է:

5. Fick, Vergleichendes Wörterbuch der indogermanischen Sprachen. 4-րդ տպագրութիւնը շարունակում է: Սա լաւագոյն հնդկոսպական համեմատական (ստուգաբանական) բառարանն է:

6. Hirt, H. Die Indogermanen, ihre Verbreitung, ihre Urheimat und ihre Kultur, Strassburg 1905—1907.

7. Schrader, Sprachvergleichung und Urgeschichte, 1907 Գ. տպգր. Համեմատական լեզուաբանութեան նուիրուած պարբերական հրատարակութիւններից կարելի է յիշել.

1. Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete der indogermanischen Sprachen, 1852 թից, հիմնադիր Kuhn (Քիոնին). Կրօնատ՝ Kuhns Zeitschrift կամ K. Z.

2. Beiträge zur Kunde der indogermanischen Sprachen, Götting., 1877-ից, հիմնադիր Bezzemberger (Bezzeubetgers Beiträge=B. B.) 1907-ից միացած նախորդի հետ:

3. Indogermanische Forschungen, Zeitschrift für indogermanische Sprach—und Altertumskunde, հրատ. K. Brugmann & W Streitberg. 1892-ից. Կրօնատ՝ I. F. Յաւելուած՝ Anzeiger für indogermanische Sprach und Altertumkunde.

4. Orientalische Bibliographie, 1887-ից. այստեղ յաճախ լինում են յօդուածներ հայագիտութեան վերաբերեալ:

Առանձին ճիւղերի վերաբերեալ լեզուաբանական բազմաթիւ երկասիրութիւններից յիշենք ամնակարեռները:

### I Հնդկական նիւդ.

1. Thumb, Handbuch der Sanskrit, I-II Teil, 1905.

2. Ф. И. Кнауэръ, Учебникъ санскритскаго языка, Лейпцигъ 1908.

3. Böthlingk u. Roth, Sanskrit—Wörterbuch, 7 համ. II. Պիտերբուրգ, 1852—75.

4. Capeller, Sanskrit—Wörteabuch 1887, աւելի յարմար գործածութեան համար:

5. Uhlenbeck, Kurzgefasstes etymologisches Wörterbuch der Alt-indischen Sprache, Amsterdam 1898.

## II ԻՐԱՆԱԿԱՆ ԲԻՒՂ.

1. Geiger u. Kuhn, Grundriss der Iranischen Philologie, Strassburg I հատ. յատկապէս իրանական համեմատական քերականութիւնը, որ կազմել է Բարթոլոմէէն:
2. Bartholomae, Altiranisches Wörterbuch, Strassburg, 1904.
3. Reichelt H., Avestisches Elementarbuch, Heidelberg, 1909.
4. Hübschmann, Persische Studien 1895.

## III ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒՂ.

1. Hübschmann, Armenische Studien, Leipzig 1883.
2. Hübschmann, Armenische Grammatik I Theil, Armenische Etymologie, Leipzig 1895—1897.
3. A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne 1903.
4. Pedersen, մի շարք յօդուածներ Կ. Z. XXXVI—XXXIX.
5. Lldén, Armenianische Studien, Gütteborg 1906.
6. Н. Марръ, Грамматика древне-армянского языка, Ա. Պետրովուրդ 1903.
7. Նոյնը Основные таблицы къ грамматикѣ древне-грузинского языка (յառաջաբանը):
8. Karst, Historische Grammatik der Kilikisch-Armenischen, Strassburg 1901.
9. Աճառիսան Հր.—Classification des dialectes arméniens, Փարիզ 1909.—Հայերէն մշակուած հրատարակութիւնը—Էմինեան աղգագրական ժողովածու, հատ. Ը., Հայ բարբառագիտութիւն. Աւրուադիծ և դասաւորութիւն հայ բարբառների, Մոսկուա—Ն. Նախիչևան 1911.

## IV ԱԼԲԱՆԱԿԱՆ ԲԻՒՂ.

1. Meyer, Albanesische Studien, 1892.
2. Նոյն, Etymologisches Wörterbuch der albanesischen Sprache, Strassb. 1891.

## V ՅՈՒՆԱԿԱՆ ԲԻՒՂ.

1. Meyer, Griechische Grammatik, Պ. տպագր. 1896.
2. K. Brugmann, Grichische Grammatik, 1900.
3. Prellwitz, Etymologisches Wörterbuch der griechischen Sprache, Բ. տպագր. 1905.

## VI ԻՏԱԼԱԿԱՆ ԲԻՒՂ.

1. Lindsay, die lateinische Sprache 1896, թարգմանութիւն անգլերէնից. աւելի յաջող է քան բնագիրը.

2. Историческая фонетика Латинского языка, перев. съ нѣмецнаго А. Грушки, М. 1910.

3. A. Walde, Lateinisches Etymologisches Wörterbuch *Բ. տպագր.* 1910.

4. Gröber, Grundriss der romanischen Philologie, *Բ. հրատ.* 1905.

5. Meyer-Lübke, Grammatik der romanischen Sprachen, 3 Bde 1890—900.

### VII Կելտական նիւդ.

1. Thurneysen, Handbuch des Altirischen, Heidelb. 1909.

2. A. Pedersen, Vergleichende Grammatik der Keltischen Sprachen, Götting., 1908—9.

### VIII Գերմանական նիւդ.

1. H. Paul, Grundriss der germanischen Philologie, *Բ. տպագր.* Շարասրուրդ 1901. Kluge-ի, Noreen-ի, Behaghel-ի և լին յօդուածները:

2. Streitberg, urgermanische Grammatik, Heidelb. 1096.

3. Kluge, Fr. Etymologisches Wörterbuch der deutschen Sprache, 7-րդ տպագր. 1909.

4. Գերմանական հին բարբառների երկու ժողովածու՝ Բռառնէի և Շարայտրերդի խմբագրութեամբ:

### IX Բալթիկեան լեզուներ.

1. O. Wiedemann, Handbuch der litauischen Sprache, Strassb. 1897.

### X Սլավնական լեզուներ.

1. A. Leskien, Handbuch der altblгарischen Sprache 5-րդ տպագր. 1910. (ռուսեր. թարգմ. Բ. տպագրութիւնից—Грамматика Старославянск. языка М. 1890).

2. Leskien, Grammatik der altblгарischen Sprache, 1909.

3. Кульбакинъ, Древне церковно-словянскій языкъ, I ч. Введение, фонетика. Харьковъ 1911.

4. E. Berneker, Slavisches etymologisches Wörterbuch, շարունակում է հրատարակուել:

5. Archiv für slavische Philologie, հրատ. Եագիչի.

6. Энциклонедія славянской филологии, » »

### Ո. Արքահամեան.